

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ «ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԸ» ԵՎ ԱԿՔՅՈՒՐՆԵՐԻ  
ՀԻՇԱՏԱԿՄԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅՈՒ ՍԿՋՐՈՒՆԲԸ

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Միջնադարյան պատմիչներն այս կամ այն շահով նաև պատմաբան էին: Նրանց որպես այդպիսին բնորոշում է նաև պատմական աղբյուրներին արձագանքելու, դրանք հիշատակելու կամ հղելու երևույթը: Այդ հարցի նկատմամբ այսօրվա պահանջները և պատկերացումները, բնականաբար, շեն եղել միջնադարում: Բայց եղել է երևույթը և հարցը, որի դրման և լուծման ձևն ու մակարդակը պայմանավորված են եղել ժամանակաշրջանի և պատմիչի պատմագիտական ըմբռնումներով ու հայացքներով: Այս հարցի վերաբերյալ IX—X դդ. պատմիչ Հ. Դրասխանակերտցու հայացքների քննությունը կարեվոր է մի քանի առումներով: Նախ՝ այն ինքնին հետաքրքիր է որպես հայ պատմագրության նոր զարթոնքի ժամանակի պատմագիտական մտքի մի դրսևորում: Երկրորդ՝ որպես ավանդականությանը, և հատկապես, խորենացիական ավանդներին հետևել ձգտող հեղինակ, Հ. Դրասխանակերտցին կարող էր ավանդաբար նրանից ժառանգած լինել նաև իր այս սկզբունքը: Եվ երրորդ՝ դա հնարավորություն կտա բանասիրական այս կամ այն հարցի լուծման համար Հ. Դրասխանակերտցուն վկայակոչելիս ճիշտ դնահատել նրա համապատասխան հաղորդումները:

Մինչև V դ. կեսի դեպքերը շարադրելիս Հ. Դրասխանակերտցին համարյա ամբողջությամբ հետևում է Մ. Խորենացու Պատմությանը և խիստ հազվադեպ է դուրս գալիս նրա շրջանակներից: Այս ընթացքում նա հանվանն ընդամենը շորս աղբյուր է հիշատակում, որոնցից առաջին երեքը նույնությամբ վերցված են Մ. Խորենացուց՝

1. (Դ) Ապա ոմն յազգէ ասորի՝ Մար Աբաս Կատինայ անուն... երթեալ ի դիւանս թագաւորացն Պարսից... գտանէ անդ մատեան մի վաւերական... զրոյցս... մերոյս գրոհի հանեալ բերեալ մատուցանէր Վաղարշակայ: Եւ այնուհետև յայնմանէ ծանուցաւ մեզ մերոյն անվրէպ զրուցաց հաւաստիք (էջ 14):

(Խ) Եւ գտեալ զոմն ասորի Մար Աբաս Կատինայ... յղէ առ եղբայրն իւր Արշակ Մեծ... բանալ նմա զդիւանն արքունի... և գտանէ մատեան մի: Յայսմ մատենէ Մար Աբաս Կատինայ զմերոյ ազգիս միայն հանեալ զպատմութիւն հաւաստի՝ բերէ առ Վաղարշակ արքայ... Յորմէ մեր հաւաստի ի վերայ հասեալ կարգի զրուցացս՝ երկուրդեմք այժմ քում հարցասիրութեանդ (Ա, Թ, 29—31):

Կարելի էր նույնիսկ մտածել, թե Հ. Դրասխանակերտցին Մար Աբասին ներկայացնում է որպես իր անմիջական աղբյուր, ինչպես այդ ուղղակի ասված է Մ. Խորենացու դեպքում: Ճիշտ է, նա վերջինիս՝ Մար Աբասի հետ ան-

1 Օգտագործում ենք հետևյալ հրատարակությունները՝ «Մովսիսի Խորենացու Պատմութիւն Հայոց», աշխատությանը Մ. Աբեղյան և Ս. Հարությունյան, Տփղիս, 1913, «Յոհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցու Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, որոնցից կատարած մեջբերումների համար փակագծում կնշենք առաջինի գիրքը, պուխը և էջը, երկրորդի՝ միայն էջը՝ սկզբից դեմքով նաև համապատասխանաբար Խ և Դ տառերը: Հ. Դրասխանակերտցուց բերված վկայություններին տալիս ենք հերթական համարներ: Բնագրային ընդգծումները մերն են:

միջական աննյություն ենթադրող «յօժմէ երկրորդեմք»-ը վերածնել է ավելի անորոշ «յայնմանէ ծանուցաւ մեզ»-ի, որի տակ արդեն կարելի է նաև հասկանալ՝ հայտնի դարձավ հայ իրականությանը կամ պատմագրությանը, սակայն այս փոփոխությունն արված է ոչ այդ նպատակով և չի բացատրում նման բնկալումը<sup>2</sup>:

Երկրորդ որոշակի հղումը վերաբերում է հին դիվանատներին և բնույթով նման է նախորդին.

2. (Դ) Եւ այսքան անուանք և զբրոյցք թէ հարցեալ լինի՝ յորմէ՞ գոլ դիտել՝ գիտասցէ, զի Քաղդէացոց մատնանէմ մեզ ընձեռեցան, որք կան ի նինուէ և յնդեսիայ առ Տիբերիս գրեալ<sup>3</sup> (էջ 21):

(Խ) Ապա եթե ասիցես, ուստի՞ մեզ և զնախնեացն մերոց գիտել զանուանս այսպէս, իսկ զբազմաւ և զգործս՝ ասեմ. ի ճնոց զիւանաց Քաղդէացոց, Ասորեստանեայց և Պարսից (Ա, ԻԱ, 66):

Հ. Դրասխանակերտցին, բնականաբար, քաջ ծանոթ էր Ագաթանգեղոսին, սակայն նրա ամփոփած նյութի զգալի մասը գերադասել է քաղել միջնորդաբար՝ Մ. Խորենացուց, կրկնելով նաև վերջինիս հղումը: Յույց տալու համար, որ նրա իրական աղբյուրն իսկապես Մ. Խորենացին է, այս հատվածը մեջբերենք մի փոքր ավելի ընդարձակ.

3. (Դ) Բայց իբրև սպանաւ Արտաւան արքայ Պարսից յԱրտաշէրէ Ստահրացոյ՝ բարձեալ անտի ղթագաւորելն Արշակունեաց և ինքն փոխանակ թաղաւորէր:

Իսկ Անակ, որ ի Սուրենական Պահլաւայ էր և ի Պարթևականն Արշակունի տոհմէ, ի բազում և ի պէսպէս խոստմունս Արտաշէրի հրապուրեալ և իբրև հատուածեալ իմն առ ի նմանէ զինքն ցուցեալ, գալ առ արքայ Հայոց Խոսրով, զի ի ձեռն ազգականութեանն փախստի զնա վստահացուցեալ և կեղծաւորեալ սիրով զդաւելն դիրեաւ արասցէ և հասցէ խոստմանց Արտաշէրի, որպէս լիապէս քեզ ուսուցանէ աջողակ պատմագիրն Ագաթանգեղոս (էջ 37):

(Խ) Արտաւան ամս երեսուն և մի: Զսա սպանեալ Ստահրացոյն Արտաշէրի, որդւոյ Սասանայ, բառնալով զթագաւորութիւնն Պարթևաց... (Բ, ԿԹ, 205):

Արտաշիր... բազում խոստմունս նախարարացն առնէր... պէս պէս պարզևս տալ խոստանայր... Յոր հրապուրեալ Անակ, որ էր ի ցեղէն Սուրենեան Պահլաւէ... և հատուածի պատճառաւ փախստական լինի յԱրտաշէրէ... դիրահնար գողցես ի ձեռն կեղծաւոր սիրոյ զդաւելն. ազգականութեան անուամբ պատրել՝ ի դոսա վստահանայ. Իսկ զմնացեալսն ի դրուցացս ուսուցանէ քեզ Ագաթանգեղոս (Բ, ՀԴ, 211—212):

2 Մ. Խորենացու Պատմության հետ Հ. Դրասխանակերտցու ունեցած կապի յուրահատկությունը և, մասնավորապես, նրա հղումները մեխանիկորեն նույն տեղում կրկնելը նկատի չունենալու հետևանքով, արդեն կարծիք է հայտնվել, թե Հ. Դրասխանակերտցին օգտվել է անմիջապես Մար Աբասից: Այս սխալ տեսակետը ընդունելություն չի գտել (օրոհնց Երևանի պետական համալսարանի պատմա-հնագիտության ֆակուլտետի դոցենտ Գ. Գաբրիելյանից, տեղ. 1965, թ. 75):

3 Համադրված հատվածում, թվում է, Հ. Դրասխանակերտցին այլ բան է ասում (ֆաղդեպիների մատյանները, որ գրված են Նինվեում Տիբեթիս կայսեր ժամանակ՝ եթե թարգմանենք բառացի), քան Մ. Խորենացին (ֆաղդեպիների, առօրեատանցիների և պարսիկների հին մատյանները): Սակայն դա չի կարող նշանակել, թե չի կրկնել Մ. Խորենացուն. նա միայն հին դիվանների մասին Մ. Խորենացուց քաղած բոլոր տեղեկությունները ի մի ձուլելու անհաջող փորձ է արել (հմտ. ԵՄԵՍԻ լրջատույթամբ հրամայէ (Արշակ Մեծը) առաջի առնել նմա զգիւանն արհուլի, որ ի նինուէ» (Ա, Թ, 30), «Թագաւորէ Հռոմայեցոց Տիբեր... Յայնժամ շինէ (Արգարը—Ա. Ս.) քաղաք, որ կոչի Նդեսիայ և փոխէ ի նա... զմտանսն մեներից վարժարանին, և միանգամայն զգիւանս քաղաւորացն (Բ, ԻԷ, 144):

Անակի՝ Հայաստան գալու, Գրիգորի լինելուցն և հոսորովին սպանելու պատմությունները 2. Դրասխանակերտցին դարձյալ քաղել է ոչ թե Ագաթանգեղոսից, այլ Մ. հորենացուց՝ կրկնելով վերջինիս հաջորդ՝ անորոշ հղումը.

4. (Դ) ...և ըստ երկնային այցելութեանն պատահի սորա տեղի օթևանի ի քնարանի սրբոյ Առաքելոյն ի ներքազոյն սրսկապանի խորանին, և անդ ապա լինել ասի յուրթեան մօր Սրբոյն Գրիգորի (էջ 38):

(Խ) ...պատահէ նմա տեղի օթարանին մօտ առ դիրս սրբոյ Առաքելոյն, որպէս թէ ի ներքազոյն սրսկապանի խորանին. և անդ ասեն զյղութիւն մօր սրբոյ և մեծի մերոյ Լուսաւորչին (Բ, 2Գ, 212):

Շարունակությունը՝ մի քանի նախադասություն, 2. Դրասխանակերտցին քաղել է անմիջականորեն Ագաթանգեղոսից՝ երրորդ անգամ, արդեն ինքնուրույն, անորոշ ակնարկելով նրան. 5. (Դ) «Որ ապա ըստ շար հինին հասելոյ դաջկաց ոմանց զերկուս զուստր մանկունս ստնգեայս ըստ անջուշտ պատմագրին յաշխարհն Յունաց փախստեայ տանէին»<sup>4</sup> (էջ 38):

Կարելի է արդյոք ասել, թե 2. Դրասխանակերտցին, Մ. հորենացուց օգտվելով հանդերձ, երբ հիշատակում է Մար Աբասին, հին դիվանները և Ագաթանգեղոսին, նպատակ ունի թաքցնել իր անմիջական աղբյուրը և դրա փոխարեն ներկայացնել ավելի հինը: Եթե առաջին երկու դեպքի համար այսպես մտածված դեռ կարող է ենթարկվել ինչ որ տրամաբանություն, ապա երրորդը խիստ անտրամաբանական է. Ագաթանգեղոսի Պատմությունը, իրոք, եղել է նրա ձեռքի տակ և նա կարիք չուներ մեխանիկորեն կրկնելու վերջինիս անվան Մ. հորենացու հիշատակությունը: Ուրեմն, պատմիչի համար հարցը եղել է ոչ թե իր անմիջական կամ ոչ անմիջական աղբյուրի, այլ տվյալ վկայության, եղելության կամ ժամանակահատվածի առաջին՝ հեղինակային սկզբնաղբյուրի հիշատակումը: Այսպիսի եզրահանգումը լիովին հաստատվում է 2. Դրասխանակերտցու շորորդ որոշակի՝ այս անգամ արդեն Մ. հորենացուն արված հղմամբ. 6. (Դ) «Այլ երկոցունց սոցա զվարս և զկարգս և զարութիւնս և զանարութիւնս և զպատերազմունս՝ թէ պիտոյ է քեզ, բովանդակաբար ցուցցէ քեզ Պատմութիւնն Մովսէսի Խորենացույն» (էջ 52—53): Այստեղ խոսքը վերաբերում է Հայաստանի հունական և պարսկական մասերի թագավորներ Արշակին և հոսորովին: Մինչև այստեղ էլ իր համարյա ամբողջ շարադրանքը նա կառուցել է Մ. հորենացու նյութի վրա: Ի՞նչն է պատճառը, որ Մ. հորենացին հիշատակվում է հենց այստեղ և այն էլ ոչ թե որպես ամբողջ նախընթաց նյութի աղբյուր (ինչպիսին որ է իրականում), այլ՝ որոշակիորեն միայն Արշակի և հոսորովի թագավորությունում սկսվող դեպքերի:

Առաջին և երկրորդ գրքերի համար Մ. հորենացին բազմաթիվ աղբյուրների է հիշատակել, իսկ երրորդի համար՝ ոչ մեկը: Սակայն 2. Դրասխանակերտցուն քաջ հայտնի է եղել, որ Մ. հորենացու Պատմության վերջին գրքի ամփոփած ժամանակահատվածի մի մասը՝ Տրդատի մահից մինչև հայոց թագավորության երկու մասի բաժանվելը, պատմում է Փ. Բուղանդը՝ ներկայանալով որպես դեպքերի ժամանակակից: Ուրեմն, նրա պատկերացմամբ հենց այս վերջին կետից է, որ սկսվում է Մ. հորենացու ինքնուրույն պատմությունը, այստեղից է, որ նա հանդես է գալիս որպես դեպքերի առաջին արձանագրող, որպես առաջին աղբյուր, ուստի և, հետևելով աղբյուրի հիշատական վերոհիշյալ սկզբունքին, նա Մ. հորենացուն հիշատակում է հենց այստեղ:

Աշտարակաշինության և մարդկանց լեզուների բաժանման մասին պատմությունը Մ. հորենացին ներկայացնում է որպես անմիջականորեն Մար Աբասի մատչանից քաղած նյութ. «ՅՈՒՐՈՒՄ է սկիզբն բանիցն այսպիսի. «Ահեղք և երևելիք առաջինքն ի դից... և ի սոցանէ հատեալ գտան ազգ սկայիցն... որք հղացեալ ամբարտաւանութեամբ՝ ծնան զամբարիշտ խորհուրդ աշտարա-

<sup>4</sup> Հմմտ. «Ա գ ա թ ա ն դ ե ղ ա յ Պատմութիւն Հայոց», Տփղիս, 1909, էջ 23—24:

կաշինութեանն» (Ա, Թ, 31—32): Է. Դրասխանակերտցին կրկնում է. 7. (Դ) «Եւ զսոյն զսա գիտէ բանս ընդ վիթխարի սկայիցն միակամեալ գործել զբարձրաբերձ ամբարտակին շինուածս ամբարտաւանութեան, որք կարծէին կարել կատարել զամբարշտութեանն խորհուրդ» (էջ 14—15): Նկատի ունենալով նույն աղբյուրը, Մ. Խորենացին շարունակում է. «...յոր հողմ ահագին իմն և աստուածային շնչեցեալ ի դիցն ցասմանէ՝ ցրէ զամբարտակն» (Ա, Թ, 32): Լեւտեկելով Մ. Խորենացուն, սակայն քաջ իմանալով, որ դա աստվածաշնչային սյուծե է, Է. Դրասխանակերտցին հղում է ս. Գիրքը, առանց, սակայն, իրականում վերջինիս դիմելու. 8. (Դ) «Իսկ ըստ աստուածայնոցն պատմութեանց՝ հողմ ահագին գոգցես իմն աստուածային հրամանան շնչեցեալ՝ զբուրգն բարձրաբերձ ի վայր հոսեալ կործանէր...» (էջ 14): Բուրգի պատմութիւնը Մ. Խորենացու մոտ հեթանոսական երանդ ունի. այն քանդվում է «ի դիցն ցասմանէ»՝ փշած աստվածային քամուց, այսինքն՝ հեթանոսական աստվածների կամքով և զորութեամբ: Է. Դրասխանակերտցին դա նույնութեամբ թողնել չէր կարող և «ի դիցն ցասմանէ»-ն դարձրել է «աստուածային հրամանաւ», որ արդեն բոլորովին այլ աստծու է վերաբերում<sup>5</sup>, դառնում այն, ինչ ունի Աստվածաշունչը, որ և վերջինս հղելը հնարավոր և անհրաժեշտ է դարձնում:

Ինչ խոսք, կաթողիկոս Է. Դրասխանակերտցին հմուտ և քաջատեղյակ է եղել ս. Գրքին, որից և իր Պատմութեան ինքնուրույն մասերում բազմաթիվ վկայակոչումներ ունի (հայտնելով կամ չհայտնելով այդ մասին): Եվ, այսուամենայնիվ, Աստվածաշնչի այն հիշատակութիւնները, որոնք գտնվում են նրա Պատմութեան Մ. Խորենացուց քաղված մասում, դարձյալ մեխանիկական կրկնութիւններ են.

9. (Դ) Առ սովաւ (Հրաշայի ժամանակ—Ա. Ս.) գերեալ գիտէ Գիրն գլորէաստան ի նարուզողոնոտրայ (էջ 21):

(Խ) Առ սովաւ ասեն կեցեալ զնարուզողոնոտր արքայ Բարեւացուց, որ գերեաց գլորեայս (Ա, ԻԲ, 68):

Նահապետների շարքի մեջ՝ Թորգոմի կապակցութեամբ, Է. Դրասխանակերտցին ունի մի ծանոթութիւն. 10. (Դ) «Եւ Թորգոմ, որ ըստ Երեմիայ՝ զԱսքանազեանս գունդ յիւր անուն նուաճէր տուն Թորգոմեայ» (էջ 11): Խոսքը վերաբերում է Աստվածաշնչի Երեմիայի Մարգարեութեան գրքին, որտեղ, սակայն, այսպիսի տեղեկութիւն չկաւ: Այնտեղ ասված է. «Պատուէր տուք յինէն Այրարատեան թագաւորութեանցն և Ասքանազեան գնդին»<sup>6</sup>, որ նույնութեամբ, բայց ո՛չ Թորգոմի անվան հետ կապված, մեջ է բերում նաև Մ. Խորենացին. (Խ) «Եւ զի արգարև զայնու ժամանակաւ էր ազգիս մերոյ թագաւորութիւն՝ վկայէ և Երեմիայ մարգարէ ի բանս իւր, հրակիրելով ընդդէմ Բաբելոնի ի պատերազմ «Հրաման տուր, ասէ, Այրարատեան թագաւորութեանն և Ասքանազեան գնդին» (Ա, ԻԲ, 67), իսկ այն տեղում, որին զուգահեռ է Է. Դրասխանակերտցու այս վկայութիւնը, միայն ասվում է, որ Թորգոմը Հայկի հայրն էր (Ա, Ե, 19): Նկատի ունենալով, որ Է. Դրասխանակերտցին նույնիսկ Նոյի և նրա հաջորդների շարքի համար անմիջապէս Աստվածաշնչին չի դի-

5 Մ. Խորենացուց քաղված մի հատվածում այս բնույթի փոփոխութեան մի օրինակ ունի նաև Ուխտանեայց. Արշակ Ա-ի մասին աղբյուրի զգնիզակն իւր... խորագոյնս նստոյց յերկանաքար արձանին, զոր... բազում ժամանակս սրատուցին Պոնտացիք որպէս գառ ի յաստուածոցն գործ» (Բ, Թ, 119) վկայութեան մեջ, որտեղ խոսքը, բնականաբար, հեթանոսական աստվածների մասին է, եւ ընդգծվածը դարձրել է «որպէս քէ յԱստուծայ է գործն» (Ուխտանեայց եպիսկոպոս, Պատմութիւն, Վազարշապատ, 1871, էջ 40):

6 Երեմ, ԵԱ, 27.

մում<sup>7</sup>, կարելի է ենթադրել, որ այս վկայութունը նույնպես նրան ծանոթ է Մ. Խորենացու միջոցով:

Հետևյալ անորոշ հղումները նույնպես Մ. Խորենացուն հետևելու և կրկրենելու արդյունք են.

11. (Դ) ...այլ երթայր բնակէր լոնելայն ի Մանէ այրս՝ ըստ գրեցելումն, թէ ի նաւահանգիստ փութայ նաւ խոռվեալ և անձն ժուժկալ խնդրէ զանապատ (էջ 40):

(Խ) ...սա սիրեաց զմիայնակեցութեան վարս, որպէս ասաց ոմն, թէ ի նաւահանգիստ փութայ նաւ խոռվեալ, և անձն ժուժկալ խնդրէ զանապատ<sup>8</sup> (Գ, Խէ, 316):

12. (Դ) Արամայ բազում արութիւն քաղութեանց մրցանաց պատմի, և ընդարձակեալ ասի հարստահարութեամբ քազմաւ զսահմանս Հայոց հասարակ ընդ շորս ոլորտս երկրի (էջ 17):

(Խ) Արամայ բազում գործք քաղութեան պատմին մարտից նահատակութեան և ընդարձակել զսահմանս Հայոց յամենայն կողմանց (Ա, ԺԲ, 42):

13. (Դ) Ի սմանէ (Տիգրանից—Ա. Ս.) ասեմ լինել զՈստանիկ ազատութիւն բարձին, որ այժմ դեռ ևս կայ և պահի անուամբ իբր թագաւորական իմն զարմ զնոսս իմացեալ (էջ 22):

(Խ) Եւ զՈստանն անուանեալ կողմանցան այնոցիկ ազատութիւն ի զարմից սորա ասէ լեալս, իբր թագաւորական զարմս (Ա, Լ, 83):

14. (Դ) Ձոր ի կանտոցահար աղբախս ընդ վիշապաց ճամբաւէին կուռիլ նմա և յաղթել, և ընդ քաջին Հերակլեայ նահատակութեանցն զնահամեմատեալ (էջ 22):

(Խ) Ձայս երգելով ոմանց փանդոամբ, լուրբ մեռով իսկ ալկանջոփ: Յետ որոյ և ընդ վիշապաց ասէին յերգին կուռել նմա և յաղթել և կարի իմն նմանագոյնս զՀերակլեայ նահատակութիւնսն նմա երգէին (Ա, ԼԱ, 86):

15. (Դ) Ասի բան զՎահագնէ, թէ ի նահանգին Վրաց ըստ շափ հասակի նորա անդրի կանդնեալ պատուէին գոհիւք (էջ 22):

(Խ) Այլ ասեմ զսա և աստուածացեալ և անդրի ի Վրաց աշխարհին զսորա շափ հասակին կանգնեալ պատուէին գոհիւք (Ա, ԼԱ, 86):

16. (Դ) Պատմի, եթէ զտէգ նիգակի իւրոյ, զոր արեամբ օձից ասէին մխեալ՝ նստուցանէր հարուստ խորութեամբ յարձանի միում (էջ 27):

(Խ) ...զնիզակն իւր, ասեմ, զբոլորատէգ, որ էր արեամբ զեռնոց մխեալ, ձգեալ ի հետևակուց՝ խորագոյնս նստուց յերկանաքար արձանին (Բ, Թ, 119):

Մ. Խորենացու անորոշ հղումները մեծ մասամբ այնպիսին են, որ ընթերցողը կարողանում է աղբյուրի նախընթաց որոշակի հիշատակութունից հղումն արտահայտող բառի իմաստից ու ձևից հասկանալ, թե ինչ սկզբնաղ-

7 Ը. Դրասխանակերտցին օգտվում է VII դ. հայտնի ժամանակագրութունից, միաժամանակ այժի առաջ ունենալով նաև Մ. Խորենացուն: Այս կապն անցողակի նկատել է նաև Բ. Սարգիսյանը («Անանուն ժամանակագրութիւն խմբագր. յօրինեալ յէ դարու», Վենետիկ, 1904, էջ 1):

8 Մ. Խորենացու այս խոսքը վերաբերում է Մ. Մաշտոցին, իսկ Ը. Դրասխանակերտցին, ելնելով իր ստեղծագործական սկզբունքներից, այն օգտագործել է Գրիգոր Լուսավորչին բնորոշելու համար:

բյուր նկատի ունի հեղինակը: 2. Դրասխանակերտցին նման մտահոգութիւն չի ունեցել. հետաքրքիր է նկատել, որ նույնիսկ բերված զուգադիր օրինակներում հղումն արտահայտող բայերի թիվը Մ. Խորենացու ունեցածի համեմատութեամբ նա դարձնում է հակառակը, օգտագործում որևէ հումանիշ կամ փոխում բայի սեռը:

Կան նաև դեպքեր, երբ 2. Դրասխանակերտցին շարադրանքի նույն մասում, աղբյուրի հղման հետ միասին, կրկնում է նաև առաջին դեմքով ընթերցողին ուղղված Մ. Խորենացու խոսքը.

17. (Գ) Իսկ ես յայսմեքնէ սակաւութիւն զթագաւորելն Վաղարշակայ ի վերայ մեր շարայարեցից և որք յետ նորա ի նորին սերմանէ փոխանորդեցին զթագաւորութիւն, որք և Արշակունիք անուանեցան. և զանլորչն, որ յայլոց ոմանց եղև պատմեալ ի նոսա հրաւիրեցից գիտել, թէ պիտոյ է քեզ (էջ 23):

(Խ) Գրեմ քեզ այժմ... որք յարքաւէն Պարսից յԱրշակայ և ի Վաղարշակայ եղբօրէ նորա... և որ ինչ որք յետ նորա եղեն թագաւորք աշխարիս մերոյ ի նորին սերմանէ, որդի ի հօրէ առնուով զտէրութիւնն՝ անուանեցան Արշակունիք յԱրշակայ... Բայց գրեմ կարճ ի կարճոյ՝ որ ինչ մեզ անկն է, և զանլորչսն թողում: Քանզի բաւական է յաղագս այլոց ազգաց որ ինչ ի բազմաց ասացեալ եղև (Բ, Ա, 101):

Բացահայտ է, որ «յայլոց ոմանց եղև պատմեալ»-ը Մ. Խորենացու «որ ինչ ի բազմաց ասացեալ եղև»-ի ձևափոխված տարբերակն է՝ նույնպիսի մեխանիկական կրկնություն, ինչ նախորդ դեպքերում:

2. Դրասխանակերտցին իր Պատմության առաջաբանում իրենից առաջ ապրած պատմիչներին և նրանց թողած երկերի մասին գովեստի խոսքեր ունի. 18. (Գ) «Սակայն մարդիկ... ետուն մեզ զկարգս պատմութեանց յեղափոխ յեղանակացս սահմանելոց կամ անցելոց... և ստուգազէտ իմացուածիւ խորհրդոց պակասաւորեցին յարձանագրութիւնս բանից մատենագրելով զնախնական պատմութիւնսն» (էջ 3, 4): 19. (Գ) «Սակայն ոչ ըստ գեղջկաց անարուեստից երկրորդեալ զայն ինչ զոր նախ բան զմեզ քաջք և բանաստեղծք արգոյակապք<sup>9</sup> և զարմանալիք զարժանի բան պատմութեան անտրւստ ի վերուստ արձանագրեցին...» (էջ 4):

Հայտնի է, որ Պատմահայրը Հայաստանի հին իշխաններին և թագավորներին դատապարտել է այն բանի համար, որ նրանք իրենց ժամանակների և իրենցից առաջ եղած պատմական անցքերը գրի առնելու մասին հոգ չեն տարել: Այդ մեղադրանքին նա նվիրել է «Յաղագս անիմաստասէր բարուց առաջնոցն մերոց թագաւորաց և իշխանաց» վերնագրով ընդարձակ մի գլուխ<sup>10</sup>: 2. Դրասխանակերտցին, բնականաբար, Մ. Խորենացուն կրկնել չէր կարող, քանի որ մինչև X դ. հայ պատմագրությունը կուտակել էր այնքան նյութ, որ այդ հիմքի վրա կարելի էր գրել ամբողջական հայոց պատմություն և չբժգոհել աղբյուրների պակասությունից: Իրականությունը շինեղաթյուրելու համար նա պետք է ներկայացներ Մ. Խորենացու նկարագրածի հակառակ պատկերը, որ և անում է: Աղբյուրի հետ 2. Դրասխանակերտցու Պատմության կապն այստեղ հարցի (նախնիների թողած պատմագրական ժառանգությունն) նկատմամբ վերաբերմունքի) ընտրությունն է և՛ գործի սկզբում այն տեղադրելը:

Իր Պատմության Ա գրքի Գ գլուխը Մ. Խորենացին վերնագրել է «Ճաղագս զի ոչ սակս Ադամայ և այլոց նահապետացն միաբանեցան այլքն ի պատմագրաց», որտեղ տալիս է այդ մասին երկու կարգի՝ աստվածաշնչա-

<sup>9</sup> «Արգոյակապք»-ը աղավաղված բառ է, սրբագրելի շարք նայելուպէ՛ք-ով՝ ինչպես պահպանել է 2. Դրասխանակերտցու Պատմության ձեռագրերից մեկը (Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 5692, էջ 1ր):

<sup>10</sup> Մ. Խորենացի, Ա, Գ, 9—12, հմտ. նաև Ա, Ա, 6:

յին և արտաքին, աղբյուրների տեսութունը և դրանց փոխհարաբերությունը: 2. Դրասխանակերտցու առջև երբևէ նման խնդիր չի եղել, բայց և այնպես նա առաջաբանում արծարծում է նույն հարցը՝ հետևելով Մ. Խորենացուն 20. (Դ) «...հետևելով իմ ընդ համառօտ հաւաստութիւն առաջնոցն գրագիծ մատենից աստուածայնոց, այլև ընդ արտաքինոց ևս ժամանակագրութիւնս, որք վիպին հաւաստեալ...: Զի թէ և զանուանս հարցն արտաքինքն տարրորշս ի մէնջ տան... սակայն պայազատութեանն զրոյցս ի մի տարեալ բովանդակեն» (էջ 8—9):

Հայ նահապետների շարքը ներկայացնելիս Մ. Խորենացին Աստվածաշնչից գանգատվում է. «Մանաւանդ զի աստուածայնոյն Գրոյ զիւսն ի բաց հատեալ յիճքն սեպնական ազգ՝ ելիք զայլոցն իբր զարմանաբեկեացն և իւրոց անարժան կարգելոյ բանից» (Ա, Ե, 17): Այս միտքը 2. Դրասխանակերտցին կրկնում է երկու անգամ. 21. (Դ) «Եւկ եթէ աստուածայինն Մովսէս զմերց աստի զմիոյ միոյ ոչ վերագրէ զժամանակս՝ անարժանս իմն համարեալ բանի պատմութեան» (էջ 13) և մի բանի տող հետո՝ 22. (Դ) «Արդ որպէս վերագրոյնն ճառեցաւ Աստուածային Գիրք մինչև ցմերն Թորգոմ մեզ բացատուեալ զպատմութիւնս՝ անարժան վարկաւ զյիշատակ ծննդոց նորա բանի տարրորշել» (էջ 13—14): «Վերագոյն ճառեցաւ» ասելով 2. Դրասխանակերտցին նկատի ունի առաջին (21-րդ) վկայությունը, որտեղ «Աստվածային Գրքի» փոխարեն «Աստվածային Մովսէսն» է՝ «Հնգամատոյանի» հեղինակ Մովսէս Մարգարեն: Մ. Խորենացին ևս երբեմն ս. Գրքի փոխարեն պարզապես տալիս է նրա առաջին հինգ գրքերի հեղինակի անունը. (Խ) «Յաղագս թէ ինչ որ հաւասար, և է ինչ որ օտար ի Մովսէսէ պատմեն այլքն հնախօսք» (Ա, Զ, 22), կամ՝ «... իսկ թուով նահապետացն և ջրհեղեղին յիշատակաւ զոյգ և հաւասար Մովսիսի»<sup>11</sup> (Ա, Զ, 23):

Ի տարբերություն Մ. Խորենացու, որ մեր ժողովրդին կոչում է Հայկի անունով, 2. Դրասխանակերտցին ավելի շատ հակված է նրան կոչելու աստվածաշնչային Ասքանազի և Թորգոմի անուններով, որ նույնպես մակածված է Մ. Խորենացուց (ըստ վերջինիս՝ Հայկը Թորգոմի որդին է, իսկ Այրարատյան թագավորության և Ասքանազյան զնդի մասին աստվածաշնչային խոսքում ակնարկված է հայկական թագավորությունը)<sup>12</sup>, 23. (Դ) «Արդ այսպէս իմա Ասքանազեան զմեզ և տուն Թորգոմայ, և այսպէս քեզ հաւատարմացին որ վասն նահապետութեան ազգիս է բան, թէպէտև ոմանք այլազգաբար և ոմանք այլաբանաբար գրուցաց վէպս տան» (էջ 13): Ընդգծված կապակցությունը պատճենված է ազգերի բաժանման և նրանց աշխարհագրության առիթով հույն Ոլիմպիոզորոս փիլիսոփայի գրույցների կապակցությամբ ասված Մ. Խորենացու մի խոսքից. «...ոմանք այլազգաբար և ոմանք այլաբանաբար զրոյցս մատենից տային» (Ա, Զ, 25):

Այսպիսով, վերջին յոթ վկայակոչումները (17—23) կամ նույնպես անորոշ են, կամ վերաբերում են Աստվածաշնչին՝ Երկու դեպքում էլ դրանք արդյունք են Մ. Խորենացուն հետևելու և պայմանավորված են նրանով:

2. Դրասխանակերտցին ունի ևս շորս հոլում (բացի 5-ը և 6-ը), որոնք կարելի է համարել ինքնուրույն: Դրանք, համեմատելով, Մ. Խորենացու հետ անմիջական կապ չունեն. 24. (Դ) «Ապա Արշակ արքայ... առաքէ մեծաւ պատուով զՆերսէս... ի Կեսարիայ ձեռնադրիլ ի հայրապետութիւն, որ և սքանչելի իմն նշանք պատմի լեալ, զի մինչդեռ կայր ընդ բեմականսն ի ձեռնադրութեան անդ շնորհք Հոգւոյն սրբոյ աղանակերպ ի վերայ զլիսոյ նորա

<sup>11</sup> Այս սկզբունքին հետևելով, մի այլ դեպքում 2. Դրասխանակերտցին նրան անվանում է «այրքն աստուծոյ Մովսէս» (էջ 224): Անշուշտ վրիպում է Մ. Մկրչյանը, երբ առաջին (21) վկայության մասին եզրակացնում է թե 2. Դրասխանակերտցին Մ. Խորենացուն է անվանում «աստուածային Մովսէս» (Մ. Մկրչյան, Հայ հին գրականության պատմություն, Երևան, 1976, էջ 407):

<sup>12</sup> Մ. Խորենացի, Ա, Ե, 19 և Ա, ԻԲ, 67.

հանգուցեալ» (էջ 45—46)։ Չեռնադրութեան ժամանակ ներսեսի գլխին աղապ-  
 նի նստելու մասին գրուցն ունի Փ. Բուզանդը<sup>13</sup>, որի անունը Հ. Դրասխանա-  
 կերտցին ընդհանրապես չի տալիս։ Իր՝ Հ. Դրասխանակերտցու միջոցով եր-  
 բեր հնարավոր չէ պարզել, թե ինչ է թաքնված «պատմի լեալ»-ի տակ։  
 25. (Դ) «Բայց յաղագս անօրէն Վաղեսի ասի բան, թէ ըստ հրամանի հզօր  
 ձեռնին Աստուծոյ սուրբ վկայն Գէորգէոս անըմբռնելի ձեռամբ զնա սատա-  
 կէր՝ արժանի չար խորհրդոցն նմա հատուցեալ» (էջ 49)։ Թեև այս վկայու-  
 թեանը նախորդող և հաջորդող նյութը շարագրված է ըստ Մ. Խորենացու, սա-  
 կայն վերջինս Վաղեսի մահն այլ կերպ է ներկայացնում. «Բայց Վաղեսի  
 կայսեր ըստ արժանի իւրոց խորհրդոցն գյաւիտենական զեհննին աստե՛ն բե-  
 ճելով զօրինակ, հրակէզ եղեալ յԱրրիանուպօլիս՝ սատակեցաւ» (Գ, 19, 297)։  
 Ըստ Փ. Բուզանդի՝ Վաղեսին սպանել են Սարգիս և Թեոդորոս վկաները<sup>14</sup>։  
 26. (Դ) «Բայց դառաջադիմութիւն վարուց նորա և սքանչելիսն, զոր նսվաւ  
 Աստուած ցուցանէր, բաւական ցուցցի բեզ յայնցանէ, ու ճախ քան զմեզ  
 պատմեցին» (էջ 53)։ Խոսքը Մ. Մաշտոցի մասին է։ Սակայն այն համառոտ  
 տեղեկանքը, որ նախորդում է սրան, քաղված է Մ. Խորենացուց և այլ աղբյուր-  
 ներից որեւէ հետք չունի։ Չնայած սրանից մի քանի տող առաջ հիշատակ-  
 ված է Մ. Խորենացու Պատմութիւնը, սակայն դրանց մեջ ներքին կապ  
 չկա, և հոգնակի թվով այս անորոշ հղմամբ հեղինակը նրան չի ակնարկել։  
 Դրա տակ ընթերցողը կարող է հասկանալ բոլոր նրանց, ովքեր իրենից առաջ  
 գրել էին Մաշտոցի մասին։ 27. (Դ) «Նախ զԲագարատ, որ ի Շամբաթայ  
 Հրէէ էր, զօրմէ համբաւե՛ն լինել յազգէ Դաւթի՝ թագադիր թագընկալութեան  
 անձին իւրոյ գոլ հաստատէր» (էջ 25)։ Այս վկայութիւնը քաղված է Մ. Խո-  
 րենացուց՝ շարագրանքի նույն մասում (Բ, Գ, 104)։ Վերջինս Շամբաթին  
 համարում է «զմի ի գլխաւորաց Եբրայացուցն» (Ա, ԻԲ, 68), սակայն ոչ մի  
 տեղ նրան հրեաների Դավիթ թագավորի հետ անմիջապես չի կապում։ Այս  
 նոր կապը, որի համար արված է «զօրմէ համբաւե՛ն» անորոշ հղումը, ան-  
 պայման Հ. Դրասխանակերտցու ժամանակաշրջանի արգասիքն է։ Թագավո-  
 րական իշխանութեան հասած Բագարատունիներին անպայման պետք էր կապ-  
 վել թագավորական որեւէ տան հետ, որպեսզի հիմնավորվեր նման իշխանու-  
 թեան ունենալու իրենց պատմական իրավունքը։ Նրանք չէին կարող շրջան-  
 ցել իրենց՝ Մ. Խորենացու տված ծննդյան վկայականը, բայց նույն հիմքի վրա  
 կարող էին անել մի քայլ ևս ու իրենց հուշակել Դավիթ թագավորի սերունդ։  
 Այս դեպքում կարևոր էր ոչ թե նախահոր ազգային պատկանելութիւնը, այլ  
 թագավորական տոհմից ծագելը։

Կարելի է ասել, որ սրանով սպառովում են Հ. Դրասխանակերտցու պատ-  
 մութեան սկզբից մինչև V դ. կեսին վերաբերող մասում աղբյուրների հիշա-  
 տակում և հղում ենթադրող վկայութիւնները<sup>15</sup>։ Դրանց քննութիւնը ցույց է  
 տալիս, որ այդ վկայութիւններն ըստ ծագման կարելի է բաժանել երկու մա-  
 սի. ա) քսանմեկ դեպքում՝ արդյունք են Մ. Խորենացուն նույնութեամբ կրկնե-  
 լուն կամ նրանով պայմանավորված լինելուն, որից ութը՝ որոշակի են  
 (1՝ Մար Աբասին, 2՝ հին դիվանատներին, 3՝ Ագաթանգեղոսին, 8, 9, 10, 21,  
 22՝ Աստվածաշնչին), մյուսները անորոշ են (4, 7, 11, 12, 13, 14, 15, 16,  
 17, 18, 19, 20, 23), ինքնուրույն են կամ Մ. Խորենացիով չեն պայմանավոր-

<sup>13</sup> «Փ աւ ս տ ո ս ի Բ ու զ ա ն դ ա ճ յ է ո յ Պ ա տ մ ո թ ի ն Հ ա յ ո ճ», ս. Պետերբուրգ, 1883, էջ 61։

<sup>14</sup> Նույն տեղում։

<sup>15</sup> Հղման միակ գեպքը, որ գիտակցարար դուրս ենք թողել քննութիւնից, չի մտնում այս խմբից որեւէ մեկի մեջ, և նրա հետ կապված հարցերը դուրս են գալիս այս հոդվածի շրջա-  
 նակներից. «Սորա (Արամայիսի—Ա. Ս.) արիական քաջամասնութեան հանդէսք բաւական բեզ  
 յառաջնոցն քան զիս մատենագրոցն պատմի» (էջ 16)։



ված միայն վեց վկայություն, որից հինգը անորոշ են (5, 24, 25, 26, 27) և միայն մեկը (6) որոշակի ուղղված է Մ. Խորենացուն:

Այսպիսով, կատարված քննության հիման վրա հանգում ենք հետևյալ եզրակացությունների.

1) Հ. Դրասխանակերտցու Պատմության մեզ հետաքրքրող մասում աղբյուրների հիշատակման և նդման ղեպների մեծ մասը (27-ից 21-ը հուլիանացուն հետևելու, նրան մեխանիկորեն կրկնելու նաև ընդհանուր ազդեցության արդյունք են (ետխորենացիական մասում, որը նախորդից 5—6 անգամ ծավալուն է, նման փաստերը մի քանի անգամ ավելի պակաս են): Այսպես վարվելով՝ պատմիչը որևէ գաղտնի դիտավորություն չի ունեցել, ուստի դատապարտելի որևէ բան չկա:

2) Հ. Դրասխանակերտցին ակներևաբար խուսափում է որոշակի հղումներից: Բացի ս. Գրքի հիշատակություններից, որ ինքնուրույն չեն, նա հանվան ընդամենը շորս աղբյուր է հիշատակում (քնականաբար՝ կարևոր համարածները), որից երեքը նույնպես քաղում է Մ. Խորենացուց, չորրորդը՝ միակ ինքնուրույն և որոշակի հղումը, վերաբերում է իրեն՝ Մ. Խորենացուն: Անորոշ հղումները նպատակ չունեն մատնանշելու այս կամ այն աղբյուրը. դրանք ընդամենը ցույց են տալիս, որ այդ մասին դրվել է, պատմվել կամ ասվել:

3) Նրա պատկերացմամբ անվանապես հիշատակելի են ոչ թե այն աղբյուրները, որոնցից անմիջապես օգտվում է պատմիչը, այլ տվյալ նյութի առաջին հեղինակային սկզբնաղբյուրը:

Եթե այս երեք դրույթներից առաջին երկուսը կարող էին պայմանավորված լինել նաև պատմիչի անհատականությամբ, ապա երրորդը՝ ամենակարևորը, որ ունի ընդհանրականության և մշակութային կնիք, կարելի է դիտել որպես պատմագիտական մտքի և, հատկապես, խորենացիական մտքի ավանդույթի արգասիք<sup>16</sup>:

Մ. Խորենացու ժամանակի հետ կապված հարցերը քննելիս Հ. Մանանդյանը Մ. Խորենացու Պատմության Հ. Դրասխանակերտցու վկայակոչումների սակավությունը և ձևը (առանց ներբողական մակդիրների) համարել է սառը վերաբերմունքի արտահայտություն: Նրա կարծիքով Հ. Դրասխանակերտցին այդպես է վարվել, քանի որ Մ. Խորենացու (համարյա) ժամանակակիցը և նույն՝ Բագրատունյաց տան պատմիչը լինելով, իմացել է, որ նա իրականում ապրել է ոչ թե V, այլ IX դ., ուստի զգուշացել է անունը մի քանի անգամ տալուց կամ գո՞վելուց<sup>17</sup>: Ստ. Մալխասյանցը (թեև անհետևողական) հնարավոր է համարում Հ. Մանանդյանի նկատած երևույթը բացատրել նրանով, որ «Հռոմեացիներն Պատմագիրն իրեն էլ համարում էր քերթող, ուրեմն ըստ արվեստի Խորենացուն ընկեր և կաթողիկոսական աստիճանով նրանից բարձր»<sup>18</sup>: Սառը վերաբերմունքի մասին պատկերացումը ցրվում է և այն բացատրելու անհրաժեշտությունը վերանում՝ պատմական աղբյուրները հիշատակելու Հ. Դրասխանակերտցու սկզբունքների պարզաբանմամբ (իսկ այդ խնդիրն անվանի գիտնականները նախապես իրենց առջև չեն դրել),

16 Հայտնի է, որ Մ. Խորենացին ևս հիշատակում է մի ամբողջ շարք աղբյուրներ, որոնցից, սակայն, օգտվել է միջնորդաբար (օրինակ՝ Եվանգելիս Կեսարացու միջոցով), առանց պարզորոշ հայտնելու այդ մասին, որի համար և հաճախ մեղադրվել է: Աղբյուրի հիշատակման Հ. Դրասխանակերտցու ընձեռած նյութի հիման վրա ներկայացվող պատմագիտական հարցի այսպիսի ըմբռնումը (նկատի ունենք մեր վերջին եզրահանգումը) կարող է դառնալ նաև Մ. Խորենացու հետ կապված այսօրինակ դեպքերի բացատրման բանալի: Ըստ երևույթին, հարցի այսպիսի ըմբռնումը նրանց դարաշրջանում համարվել է ավելի «գիտական», տրամաբանական և հանձնարարելի:

17 Հ. Մանանդյան, Խորենացու առեղծվածի լուծումը, Երևան, 1934, էջ 140—141:

18 Ստ. Մալխասյանց, Խորենացու առեղծվածի շուրջը, Երևան, 1940, էջ 57:

որը, ինչպես տեսանք, ի հայտ է բերում ճիշտ հակառակ պատկեր՝ նրա խոր պատկանանքը Պատմահոր՝ որպես V դ. պատմիչի նկատմամբ: Առ այս կարելի է վկայակոչել մի շարք ուրիշ փաստեր, որ առատորեն ընձեռում է այս երկու պատմիչների գործերի համադիր քննութիւնը, սակայն դա մեր խնդրից դուրս է:

## «ИСТОРИЯ АРМЕНИИ» МОВСЕСА ХОРЕНАЦИ И ПРИНЦИП УПОМИНАНИЯ ИСТОЧНИКОВ У ОВАНЕСА ДРАСХАНАКЕРТЦИ

АШОТ САРГСЯН

### Резюме

Исследование подхода средневековых историков к вопросу упоминания источников и ссылок на них необходимо для раскрытия их историографических взглядов и правильного понимания авторских свидетельств. Изучение части «Истории Армении» католикаса Ованеса Драсханакертци (IX—X вв.), основанной преимущественно на труде Мовсеса Хоренаци, приводит к следующим выводам:

1. Большая часть упоминаний или ссылок (21 из 27) на источники у Драсханакертци связана с тем, что он следовал тексту Мовсеса Хоренаци, механически повторял его или был под его общим влиянием.

2. Драсханакертци явно избегает конкретных ссылок. Помимо ссылок на Библию, опирающихся на текст Мовсеса Хоренаци, он упоминает свои источники лишь четырежды. Причем в трех случаях берет их имена опять-таки у Хоренаци, а в одном—называет самого Хоренаци (кстати, это его единственная непосредственная ссылка). Что касается неконкретных ссылок, то их целью являлось не указание на источник, а лишь упоминание того, что по данному поводу было написано, повествовалось или говорилось.

3. По представлениям Драсханакертци, упоминанию подлежат не те источники, которыми непосредственно пользовался историк, а лишь первоисточники, первоначальные авторы данного известия.